Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Ապրիլ 2017
Լրատու թիւ 9

ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ

Ողջոյնի Խօսք

2016 թուականի սեպտեմբերի 9-ին սկսուեց 2016-2017 ուսումնական տարեշրջանը, թէ՛ աշակերտներն ու ծնողները և թէ՛ ուսուցչուհիները մեծ խանդավառութեամբ սկսեցին նոր ուսումնական տարին:

Ուրախ եմ յայտնելու, որ անցած ուսումնական տարում վարժարանն աւարտեցին 9 շրջանաւարտներ, ովքեր յաջողութեամբ յանձնեցին անգլիական կրթական GCSE-ի մակարդակի հայոց լեզուի գրաւոր, բանաւոր և խօսելու քննութիւնները:

Այս տարի 10 աշակերտ գնացին Նախակրթարան Ա և մանկապարտէզում ընդունուեցին 18 աշակերտ: Դպրոցում կրթական համակարգը վերանայուել է և ինչպէս միշտ այժմ էլ յատուկ ուշադրութիւն ենք դարձնում անգլիախօս, ցածր առաջադիմութիւն ունեցող աշակերտներին:

2016թ դեկտեմբերի 11-ին աւարտուեց առաջին եռամսեակը. . .

Ամանորին ընդառաջ բոլորս ամփոփում ենք անցնող տարին, նոր ծրագրեր կազմում գալիք տարուայ համար: Շնորհաւորելով Ամանորի և Սուրբ Ծննդի առթիւ մաղթում եմ բոլորիդ և Ձեր ընտանիքներին քաջառողջութիւն, յաջողութիւններ, անձնական երջանկութիւն և թող իրականութիւն դառնան Ձեր բոլորի նպատակներն ու երազանքները:

Թող 2017 թուականը մեր հայրենիքի և աշխարհի համար լինի խաղաղութեան տարի:

2017թ Յունուարի 8-ին վերսկսուեցին վարժարանի երկրորդ եռամսեակի աշխատանքները:

2017թ յունուարի 22-ին Փարիզի Սորբոնի համալսարանի դոկտոր պրոֆեսոր Հիլդա Գալֆաեան-Փանոսեանը անցկացրեց բաց դաս վարժարանի բոլոր 3 մակարդակների դասարաններում, որին մասնակցեցին ոչ միայն ուսուցչուհիները այլև անգլիախօս աշակերտների ծնողները: Այնուհետև նա անցկացրեց անգլիախօս աշակերտների ուսուցման համար մէկօրեայ վերապատրաստման դասընթաց ուսուցիչների համար: Այդ երկու միջոցառումները շատ օգտակար էր վարժարանի ուսուցիչների համար:

2017թ ապրիլի 2-ին աւարտուեց երկրորդ եռամսեակը:

2017թ ապրիլի 30-ին կը վերսկսուեն վարժարանի երրորդ եռամսեակի աշխատանքները:

Շնորհաւորում եմ բոլորիդ Սուրբ Յարու թեան տօնի առթիւ

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի

Քրիստոս Յարեաւ ի մեռելոց

Օրհնեալ է Յարութիւնը

Քրիստոսի

Վերամուտ

Կրկին եկավ սեպտեմբերն իր հետ բերելով գիտելիքի ուրախ տոնը: Այս տոնն իր հետ բերում է բարություն, ուրախություն և հավատ ապագայի նկատմամբ:
Մենք ուրախ և պայծառ տրամադրություն ենք մաղթում բոլոր նրանց , ովքեր առաջին անգամ են ոտք դնում այս զարմանահրաշ վարժարանը, և իհարկէ նրանց ովքեր այսքան տարի հաճախում են և ձգտում են ձեռք բերել նորանոր գիտելիքներ: Դուք չեք պատկերացնում, թե ինչքան հետաքրքիր հայտնագործություններ են սպասվում ձեզ:
Մաղթում ենք Ձեզ բարձր առաջադիմություն, իսկ մանկավարժներին՝ մեր վարժարանի կրթական գործի նվիրյալներին, ովքեր իրենց ամբասիր աշխատանքով և մեծ նվիրումով սատարում են հայապահպանության գործին, մաղթում ենք հաջողություններ իրենց շնորհակալ աշխատանքում և թող երբեք չմարի իրենց առաքելությունը կատարելու ցանկությունը:

Յիշարժան Օր Սուրբ Եղիշէ Եկեղեցում

To celebrate the Holy Translators' Day, pupils from year 4 to year 8, accompanied by their teachers and school governors, attended the Divine Liturgy at St Yegishe Church on 9th October.
His Grace Bishop Hovakim Manukyan conferred the day's message, emphasising the importance of the Holy Translation in the progression of the Armenian Culture.
At the end of the Divine Liturgy, as a souvenir, the pupils were presented with ornate wooden cross pendants and then paused for a group picture.

Տարիների աւանդոյթ է Գէորգ Թահթայեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի բարձր դասարանի աշակերտների համար այցելել Սուրբ Եղիշէ Եկեղեցի՝ նշելու Սուրբ Թարգմանչաց Տօնը:
Եւ ահա, Հոկտեմբերի 9-ին, 4-րդից 8-րդ դասարանների աշակերտները իրենց ուսուցիչների և հոգաբարձուներ Գառնիկ Թարւերդիի և Ստեփան Թաթուլեանի ուղեկցութեամբ մասնակիցը եղան մեր սուրբ թարգմանիչներին նուիրուած հոգե-պարար պատարագին:
Արարողութեան վերջում Գերաշնորհ սրբազան Հայր Յովակիմ Մանուկեանը ներկայացրեց օրւայ խորհուրդը՝ բացայայտելով թարգմանչութեան կարևորագոյն դերը գրականութեան և առհասարակ մշակոյթի զարգացման գործում:
Սուրբ Պատարագի աւարտին՝ ի յիշատակ այդ գեղեցիկ օրւան Սրբազան Հայրը փայտէ գեղաքանդակ խաչեր նուիրեց աշակերտներին և բոլորը միասին լուսանկարուեցին:

Մշակույթի օրվա հանդես

Մշակույթի օրվա հանդեսը տեղի ունեցավ հոկտեմբերի 23-ին, որը նվիրված էր Հայոց գրերի ստեղծմանը և մեր նշանավոր և տաղանդավոր մատենագիրներին: Հանդեսը սկսվեց տիկ. Ռուզաննա Թաթուլյանի բացման խոսքով:

Երգչախումբը տիկ. Լիդիա Ղազարյանի ղեկավարությամբ և տիկ. Էլլա Բաբայեանի նվագակցությամբ հրաշալի կատարեցին "Մեր մայր լեզու սրբազան" և "Աշուն" երգերը: Գեղեցիկ արտասանություններով ելույթ ունեցան մանկապարտեզի և ցածր դասարանի աշակերտները:

Միջին և բարձր դասարանների աշակերտները տիկ. Ժենիա Ներսիսյանի ղեկավարությամբ գեղեցիկ ներկայացրին մշակույթի օրվա խորհուրդը, արտասանեցին Հովհաննես Շիրազի, Պարույր Սևակի, Հովհաննես Թումանյանի, Սիլվա Կապուտիկյանի հայոց լեզվին և մեր հայրենիքին նվիրված ստեղծագործությունները:

Շնորհակալություն բոլոր ուսուցչուհիներին, աշակերտներին և ծնողներին:

Culture Day, dedicated to the invention of the Armenian Alphabet and our famous and talented translators, was celebrated on 23rd October.

The school's choir, led by Mrs Lydia Ghazaryan and Mrs Ella Babayan on the piano, sang beautifully and the younger children recited poems about our unique language and culture.

The older pupils conveyed the message of the day through a touching performance directed by Mrs Jenya Nersisian presenting our famous writers' work dedicated to our culture.

Յոբելեանական Երեկոյ Նուիրուած Վաստակաւոր Դերասանուհի Ժենիա Ներսիսեանին

Դեկտեմբերի 3-ին Նաւասարդեան Կենտրոնում մեծ շուքով նշուեց Հայաստանի Հանրապետութեան վաստակաւոր դերասանուհի, Մովսէս Խորենացու անուան, ՀՀ Մշակոյթի նախարարութեան Ոսկէ և Արտաւազդ՝ մեդալների շքանշանակիր, ներկայումս Գէորգ Թահթայեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի դրամայի խմբակի գեղարուեստական ղեկավար Տիկին Ժենիա Ներսիսեանի ծննդեան 85-րդ յոբելեանը: Այն կազմակերպուել էր Բրիտանահայ Համայնքային Խորհրդի և Գէորգ Թահթայեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի համատեղ ջանքերով:

Տաղանդաշատ դերասանուհուն ողջոյնի ջերմ խօսքեր յղեցին Բրիտանահայ Համայնքային Խորհրդի Մշակոյթի Յանձնախմբի ատենապետուհի Տիկին Մաթիլդա Մկրտիչեանը, Վարժարանի տնօրէնուհի Տիկին Ռուզաննա Թաթուլեանը, որը նաև ներկայացրեց սիրուած դերասանուհու անցած ստեղծագործական ուղին: Երեկոյի ընթացքում ցուցադրուեցին հատուածներ դերասանուհու կերտած դերակատարումներից, ընթերցուեցին շնորհաւորական ուղերձներ:

Յուզիչ անակնկալ էր դերասանուհու վաղեմի բարեկամ և նրա տարիների գեղարուեստական ղեկավար, Հայաստանի Հանրապետութեան արուեստի ժողովրդական գործիչ, բեմադրիչ Երուանդ Ղազանչեանի ողջոյնի տեսագրուած խօսքը:

Վաստակաշատ դերասանուհուն սպասուում էր նաև մէկ ուրիշ կարևոր անակնկալ՝ այն է Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարութեան կողմից շնորհուած Ոսկէ Մեդալը՝ ի գնահատումն Ժենիա Ներսիսեանի, մասնաւորապէս Սփիւռքում ծաւալած, ազգանուէր և բեղմնաւոր աշխատանքի: Մեդալը դերասանուհուն յանձնեց Մեծ Բրիտանիաում ՀՀ յիւպատոս Օր. Հայարփի Դրմեյեանը: Ներկաները նաև վայելեցին Տիկին Ժենիային նուիրուած գեղեցիկ բանաստեղծութիւնը՝ հեղինակի, Գայանէ Խաչի կատարմամբ:

Հանդիսութեան աւարտին Տիկին Ժենիան իր շնորհակալութեան խօսքն ուղղեց այդ գեղեցիկ և յուզիչ երեկոյի մասնակիցներին ու կազմակերպիչներին և ի արտայայտութիւն խորին երախտագիտութեան կարդաց մի հատուած ՝Սասունցի Դաւիթ՝ աւանդապատումից՝ մէկ անգամ ևս ներկաներին դիւթելով իր անզուգական կատարումով:

Երեկոն աւարտուեց հիւրասիրութեամբ:

Յոբելեանական Երեկոյ ...

The Armenian Community Council UK and K Tahta Armenian Community Sunday School organised an evening in homage to the talented actress, Jenya Nersisyan's, 85th birthday on the 3rd December at the Navasartian Centre.
The gifted actress was honoured with speeches by the chairperson of ACC's Cultural Committee Mrs Matilda Megerdichian, the school's headteacher, Mrs Ruzanna Tatoulian, who presented the artistic accomplishments of the actress and her contribution to the school. There were also many congratulatory letters read and a poem specially written and recited by the poet Gayane Khach.
The Republic of Armenia's Consul in the UK, Miss Hayarpy Drmeyan, presented the actress with a gold medal awarded by the Minister of Diaspora in appreciation to all her dedicated and productive work in the community.
After an expression of gratitude and a short presentation by Mrs Nersisian everyone was treated to a sumptuous reception

Անմոռաց Հանդիպում Մանկագիր Տիկին Նունէ Սարգսեանի Հետ

Վարժարանի աշակերտներին հետաքրքիր հանդիպում էր սպասւում, Դեկտեմբերի 4-ին Կիրակնօրեայ Ազգային Վարժարան էր այցելել յայտնի մանկագիր, արդէն 14 գրքերի հեղինակ, Տիկին ՆունէՍարգսեանը:
Տիկին Սարգսեանը շատ մտերմիկ զրոյցի միջոցով աշակերտներին ներկայացրեց իր անցած ստեղծագործական ուղին, թէ ինչպէս էր որոշել գրող դառնալ, ինչպէս է նա ստեղծագործում և նաև պատմեց թէ առհասարակ որքան տարբեր կարող են լինել գրողների ոգեշնչման աղբիւրներն ու ազդակները:
Ի միջիայլոց Տիկին Սարգսեանը ստեղծագործում է երեք լեզուներով՝ հայերէն, անգլերէն և ռուսերէն: Ապա մանկագիրը երեխաների ստեղծագործական կարողութիւններն ու երեւակայութիւնը բացայայտելու թեստ անցկացրեց, որը բաւական ոգևորութիւն առաջացրեց աշակերտների մէջ:
Հանդիպման վերջում Տիկին Սարգսեանը դպրոցի սաներին բաժանեց իր վերջին, անգլերէնով լոյս տեսած գիրքը՝ "Կախարդական կոճակը" "The Magic Buttons":

Հանդիպում Տիկին Նունէ Սարգսեանի Հետ

Mrs Nune Sargsyan, acclaimed author of 14 children's story books in Armenian, Russian and English, visited the school on 4th December and met with the lower and upper school pupils engaging them in different age appropriate activities.

Mrs Sargsyan spoke candidly to the pupils about how she decided to become a writer, her writing style and the things that inspire her. The author then answered several questions from the pupils about her favourite authors, books, how she chooses characters for her stories and many others.

Mrs Sargsyan engaged the pupils in creative writing and illustrating tasks and collected their drawings to look at and choose her favourite three. The pupils worked hard to impress the author.

Eventually, the author presented her latest fairytale story and discussed the characters and plot, then read to them a chapter from the book "The Magic Buttons".

Mrs Sargsyan very generously donated a copy of her book to all the pupils of the school.

Ամանորի խրախճանք

Դեկտեմբերի 11-ին վարժարանում նշեցինք գալիք Ամանորը:

Վարժարանի տնօրինուհի՝ տիկ. Ռ Թաթուլյանը ներկաներին ողջունեց և շնորհավորեց գալիք Ամանորի և Սուրբ Ծննդի առթիվ, մաղթելով բոլորին առողջություն, հաջողություններ, անձնական երջանկություն, աշխարհին և Հայաստան աշխարհին խաղաղություն:

Երեխաները երգեցին խմբակային երգեր, այնուհետև եկավ Կաղանդ Պապան և երեխաներին բաժանեց նվերներ:

Ծնողական հանձնախումբը պատրաստել էր համեղ կերակուրներ բոլորի համար:

Առաջին եռամսյակն ավարտվեց ուսուցչուհի Անուշ Գեղամյանի կազմակերպած տարեմուտի երեկոյով, որին մեծ հաճույքով մասնակցեցին ուսուցչուհիները, ծնողական հանձնախումբը և հոգաբարձուները:

Ամանորի խրախճանք

On the last day of the term, December 11th, the pupils were very excited in anticipation for a visit from someone special.
The headteacher welcomed the parents who had come to join in the celebrations and see their children perform and wished them all good health, success and happiness in the New Year. The Nursery children had a short gathering in their classroom then joined the rest of the children to sing Christmas songs for Santa who gave them all bags full of goodies.
As usual everyone enjoyed the lovely food prepared and presented by the ladies of the Parents' Committee.
The governors, teachers and members of the parents' committee also ended the year on a happy note by getting together at a nearby restaurant and having a good time.

Սուրբ Ծնունդ Սուրբ Եղիշէ եկեղեցում

Դեկտեմբերի 20-ին մեր աշակերները Սուրբ Եղիշէ եկեղեցում, տիկին Լիդիա Ղազարեանի ղեկավարութեամբ հրաշալի կատարեցին Սուրբ Ծննդեան տօնին նուիրուած երգեր:

On December 20th, some of our pupils participated in a Christmas event at St Yeghishe Church and led by Mrs Lydia Ghazaryan, beautifully sang several Christmas songs.

Ուսուցիչների Վերապատրաստման Դասընթաց

2017 թուականի Յունուարի 22-ին Փարիզի Սորբոնի համալսարանի պրոֆեսոր, Փարիզում <<Մաշտոց>> դպրոցի հիմնադիր Դոկտոր Հիլտա Գալֆայեան - Փանոսեանը անցկացրեց բաց դաս վարժարանի բոլոր 3 մակարդակների դասարաններում, որին մասնակցեցին ոչ միայն ուսուցչուհիները այլև անգլիախօս աշակերտների ծնողները: Այնուհետև նա անցկացրեց անգլիախօս աշակերտների ուսուցման համար մէկօրեայ վերապատրաստման դասընթաց ուսուցիչ-ների համար: Այդ երկու միջոցառումները շատ օգտակար էին վարժարանի ուսուցիչների համար:

Այդ դասընթացի և մեր վարժարանից ստացած տպաւորութիւնների մասին դկտ Գալֆայեանը գրեց մի յօդուած, որը տպուեց փետրուարի 16-ին Փարիզում << Նոր Յառաջ>> թերթի մէջ: Ներկայացնում ենք մի հատուած այդ յօդուածից:

As part of K Tahta Armenian Community Sunday School's annual teachers' training program, particularly focusing on advancing the teaching of Western Armenian, this year we invited renowned Western Armenian language specialist, author of several textbooks on methods of teaching Western Armenian to non-Armenian speakers using audio and visual techniques, professor of Sorbonne University of Paris and founder of "Mashtots" Armenian school Dr Hilda Kalfaian – Panossian.

During her morning in school, Dr Kalfaian-Panossian held three sessions of teaching for each key stage presenting a typical lesson with different techniques and resources. Teachers as well as some parents attended these classes with great interest.

In the afternoon, after a short social gathering, the professor met with all the teachers and delivered a training session on language teaching methods in general and introduced her textbooks and the audio-visual resources that she also uses when teaching Armenian in Paris. It was a great opportunity to meet with Dr Kalfaian-Panossian and to be reassured by her that we were on the right track.

On her return to Paris Dr Kalfaian-Panossian wrote an article about her visit and her impressions of the school. The article was featured in the newspapers - ***Նոր Յառաջ*** Nor Haratch published in Paris and ***Մարմարա*** Marmara published in Istanbul.

Դպրոցէն ներս ունինք "Առաջարկներու Տուփ" մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:

Դոկտ Գալֆայեանի յօդուածից մի հատուած

If you wish to read the whole article, please follow the link -
www.accc.org.uk/wp-content/uploads/2017/04/Dans-lECOLE-TAHTAYAN-LONDRE-23-01-2017A-LR.pdf

*"Իսկ ինծի համար 22 Յունուար 2017-ի այդ Կիրակին եղաւ երազային օր մը: Տեսնել այդքա՛ն աշակերտներ, այդքա՛ն ուսուցիչներ, այդքա՛ն դասարաններ, արեւելահայերէնի ուսուցում՝ դասական ուղղագրութեամբ, նոյնպէս արեւելահայերէնի ուսուցում՝ այս անգամ հայաստանեան ուղղագրութեամբ, արեւմտահայերէնի ուսուցում՝ դասական ուղղագրութեամբ, ամէն մէկը զատ-զատ դասարաններու մէջ, տարբեր ուսուցիչներով, եւ տակաւին՝ Հայոց պատմութիւն, նաեւ՝ երգ ու պար: Կարծէք Արեւելքի մեր հայկական **ամենօրեայ** վարժարաններէն մէկը ըլլար Եւրոպայի կուրծքին: Անհաւատալի էր, բայց իրաւ: Երեւոյթ մըն էր Գէորգ Թահթայեան **"միօրեայ" ազգային վարժարանը**: Թերեւս աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել օրինակելի դպրոց մըն էր: Երանի՜ օրինակը վարակիչ ըլլար ուրիշ միօրեաներու համար: Յոյսով լեցուած վերադարձայ Փարիզ: Վարձքը կատար՝ ուսուցիչներուն եւ Տնօրէնուհի Տիկին Ռուզաննա Թաթուլեանին, ինչպէս նաեւ հոգաբարձուներուն, ծնողական յանձնախումբին եւ մեծ ու փոքր բարերարներուն:*

Դոկտ. Հիլտա Գալֆայեան-Փանոսեան
Փարիզ, 27 /01/2017"

Ընդհանուր Գիտելիքների Մրցոյթ

Գ. Թահթաեան վարժարանի տարեկան ծրագրում յատուկ տեղ է գրաւում Ընդհանուր Գիտելիքների Մրցոյթը, որը դպրոցի կրթական աշխատանքների կողքին ստեղծում է խանդավառ մթնոլորտ մասնակցողների համար և նպաստում է դպրոցի նիւթական պահանջներին:

Սոյն թի Փետրուարի 4 – ին տեղի ունեցաւ Ընդհանուր Գիտելիքների Մրցոյթը, հարիւրից աւելի մրցակիցների մասնակցութեամբ: Ներկաները հիւրասիրուեցին ծնողական յանձնախմբի կողմից պատրաստուած ճաշերով և ամենայն լրջութեամբ մրցեցին առաջնութիւն շահելու նպատակով:

Ընդհանուր Գիտելիքների Մրցոյթ

Շահող խումբը ստացաւ իր մրցանակը, սակայն բոլորը բարձր տրամադրութեամբ մեկնեցին, որոշելով որ յաջորդ տարի պէտք է աւելի պատրաստուած մասնակցեն մրցոյթին:
Շնորհակալութիւն բոլոր նրանց ովքեր քաջալերեցին վարժարանի այս ձեռնարկը:
Շնորհակալութիւն ծնողական յանձնախմբին այս դժուարին աշխատանքը կազմակերպելու համար:

One of our school's annual social events that always creates an exciting atmosphere, accompanied by delicious food and great company whilst raising funds for the school, is the highly anticipated quiz night.
On February 4th, more than a hundred participants attended this event and with a true competitive spirit, attempted to win the coveted first place position. Although only the winning team collected a prize, everybody left with a good mood.
The Parents' Committee presented an array of scrumptious dishes and made sure that everyone was catered for. The quiz was led and the questions prepared by Mr Hratch Tokatlian. A special thank you goes to all involved in organising this popular event.

Նամակ Մեր Հայ Քաջ Զինվորին

Հայոց Բանակի կազմաւորման 25 ամեակի առթիւ ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը կազմակերպել էր ծրագիր՝ <<Նամակ Հայ Զինվորին>>:
Մեր Վարժարանի աշակերտները մեծ սիրով և երախտագիտությամբ մասնակցեցին այդ ծրագրին: Ուղարկեցինք 28 նամակ մեր քաջ հայ զինվորներին:
To commemorate the 25th anniversary of the formation of the Armenian Army, the pupils expressed their gratitude to our brave soldiers through drawings and letters which were received with great appreciation. Find them on - http://hayernaysor.am/archives/233125



Սուրբ Վարդանանց Տօն

Փետրուարի 12- ին մեր վարժարանում տօնեցինք Սուրբ Վարդանանց տօնը:
Առաւօտեան աղոթքից յետոյ վարժարանի տնօրինուհի՝ տիկ. Ռ Թաթուլեանը Վարդանանց պատերազմի վերաբերեալ բազմաթիւ հարցերով ամփոփեց 451թւականի հերոսամարտի դերն ու նշանակութիւնը, և մեր աշակերտները պատասխանելով բոլոր հարցերին ցուցադրեցին իրենց փայլուն գիտելիքները:
Կեսօրից յետոյ տեղի ունեցաւ Սուրբ Վարդանանց տօնին նուիրուած հանդէսը: Վարժարանի տնօրինուհին ողջունեց ներկաներին, այնուհետև օրուայ խորհուրդը հանգամանօրէն ներկայացրեց ուսուցչուհի տիկին Լենա Գիւլխանճեանը:
Վարժարանի ցածր դասարանի աշակերտները հրաշալի կատարեցին մեր հայրենիքին, Վարդանանց հերոսամարտի հերոսներին նուիրուած գեղեցիկ ոտանաւորները և երգը:
Բարձր դասարանների աշակերտները տիկին Ժենյա Ներսիսեանի ղեկավարութեամբ շատ գեղեցիկ ներկայացրեցին Վարդանանց խորհուրդը՝ օգտուելով Դերենիկ Դեմիրճեանի "Վարդանանք" վէպից և Վահան Թէքէեանի "Խորհուրդ Վարդանանց" ստեղծագործութիւնից:
Դահլիճի պատին փակցուած էին մեր վարժարանի փոքրիկ սաների աշխատանքները, որտեղ նրանք պատկերել էին մեր հայրենիքը և հայրենասիրութիւնը իրենց պատկերացմամբ:
Ինչպես միշտ այս տարի էլ պահպանելով մեր բոլոր հայկական ավանդոյթները մեր շատ սիրելի Ծնողական Յանձնախումբը Սուրբ Սարգսի տօնի առթիւ շատ համեղ հարիսա հրամցրեց մեզ՝ բոլորիս:
Յատուկ շնորհակալութիւն նրանց նուիրուած աշխատանքի համար:

On February 12th we observed one of our history's most significant events – Vartanantz. During assembly, after the morning prayer, the headteacher, Mrs R. Tatulian, had a discussion with the pupils about the topic.
In the afternoon, the headteacher welcomed the parents and guests who came to celebrate with us the Feast of Vartanantz. Then, Mrs Lena Kulkhanjian spoke about the events that led to the Battle of Avarayr in 451 A.D and its religious and nationalistic importance. The pupils then sang and recited poems to glorify our national hero and the sacred event.
On this day, the Parents' Association had prepared a tasty "Harissa" to commemorate the Feast of St Sarkis as well.

Տէր Շնորհքի այցելութիւնը

Fr Shnork Baghdasaryan visited the school to convey his blessings and to explain to the pupils the spiritual meaning of lent.

Մայրերու Օր

Mothers' Day was celebrated with the children reciting poems after the morning prayer.

Սուրբ Զատիկ

2016-2017 Տարեշրջան

Առաջին Եռամսեակ 11 Սեպտ. 2016 – 11 Դեկտ. 2016 Term I 11 September 2016 – 18 December 2016	
11 Սեպտեմբեր 11 September	Վերամուտ Back to school
23 Հոկտեմբեր 23 October	Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
30 Հոկտեմբեր 30 October	Արձակուրդ Half-Term Break
27 Նոյեմբեր 27 November	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
11 Դեկտեմբեր 11 December	Նոր Տարուայ Հանդէս New Year's Celebration
Երկրորդ Եռամսեակ 8 Յունուար 2017 – 2 Ապրիլ 2017 Term II 8 January 2017 – 2 April 2017	
4 Փետրուար 4 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
12 Փետրուար 12 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
19 Փետրուար 19 February	Արձակուրդ Half-Term Break
26 Մարտ 26 March	Մայրերու Օր Mothers' Day
2 Ապրիլ 2 April	Զատկուայ Հանդէս Easter Celebration
Երրորդ Եռամսեակ 30 Ապրիլ 2017 – 9 Յուլիս 2017 Term III 30 April 2017 – 9 July 2017	
7 Մայիս 7 May	Գեղարուեստական Օր "Art and Craft" workshop
21 Մայիս 21 May	Մարզական Օր Sports' Day
28 Մայիս 28 May	Արձակուրդ Half-Term Break
11 Յունիս 11 June	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
25 Յունիս 25 June	Դաշտահանդէս School BBQ
9 Յուլիս 9 July	Ամավերջի Հանդէս End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Ստելլա Թարվերդի, Տիկ Թամար Մինասեան, Տիկ Անուշ Գեղամեան,
Տիկ Արմինէ Սարգսեան, Տիկ Գայանէ Յակոբեան, Տիկ Քրիստինէ Նանեան
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան